ԱՆՁՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հ. Խ. ԿԱՐՃԻԿՅԱՆ

Տնտեսագիտական գիտությունների դոկտոր

Անձնական օժանդակ տնտեսությունը զգալի տեղ է գրավում գյուղատնտեսական արտադրության մեջ։ Գյուղի համախառն արտադրանքի մոտ 1/3-ը և ապրանքային արտադրանքի 11 %-ը ստեղծվում են անձնական օժանդակ տնտեսություններում[1]։ Չնայած օժանդակ տնտեսությունների մեծ տեսակարար կշռին և ժողովրդատնտեսական նշանակությանը, այդուամենայնիվ, քիչ են այդ հարցերին նվիրված տնտեսագիտական հետազոտությունները։

Անձնական օժանդակ տնտեսության բնույթը հասարակական վերարտադրության մեջ երկակի է։ Այն նախ կոչված է նպաստելու կոլտնտեսականների պահանջմունքների բավարարմանը հատկապես այնպիսի մթերքներով, որոնցով հանրային տնտեսությունը լրիվ չի ապահովում, ինչպես նրանց, այնպես էլ բանվոր-ծառայողներին։ Հենց դա էլ որոշում է օժանդակ տնտեսության սպառողական բնույթը։ Անձնական օժանդակ տնտեսությունը միաժամանակ կոլտնտեսականների համար լրացուցիչ դրամական եկամուտների աղբյուր է։ 1960—1964 թթ. գյուղատնտեսության բնագավառում տնտեսական քաղաքականությունն ուղղված էր կոլտնտեսականների և բանվոր-ծառայողների անհատական օժանդակ տնտեսությունները մասամբ սահմանափակելուն։ Դա արդյունք էր այն սխալ տեսակետի, թե օժանդակ տնտեսությունն աշխատուժի զգալի մասն օտարացնելով՝ արգելակում է սոցիալիստական ձեռնարկությունների ամրապնդմանը և այդպիսով խանգարում գյուղատնտեսության արագ զարգացմանը։ Սակայն փորձը ցույց տվեց, որ այդ սահմանափակումները հանգեցնում են անձնական օժանդակ տնտեսություններում անասնապահական արտադրանքի նկատելի կորուստների և դրանով իսկ խոչընդոտում երկրում անասնաբուծության արագ զարգացմանը։

Կոլտնտեսականների ազատումը անասնապահական մթերքների մթերումներից (1954) և անձնական օժանդակ տնտեսությունների որոշ սահմանափակումների վերացումը (1964) դրական ազդեցություն ունեցան գյուղատնտեսության, հատկապես անասնաբուծության զարգացման վրա։

Վերջին տարիներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճի զգալի արագացում է նկատվում բոլոր տնտեսություններում. ըստ որում՝ դա շատ ավելի նկատելի է հանրային տնտեսություններում։

---

[1] «Народное хозяйство СССР 1922—1972», М., 1972, стр. 225, 227.

ՍՍՀՄ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճի տեմպերը ըստ տնտեսությունների կարգերի 1960—1971 թթ. այսպիսին են (տոկոսներով՝ 1960 թ. համեմատությամբ)[2]

Տնտեսությունների կարգեր	1960	1965	1968	1971
Բոլոր կարգերի տնտեսություններ	100	112	128	140
այդ թվում՝				
կոլտնտեսություններ, սովխոզներ, պետական այլ տնտեսություններ	100	118	139	153
Կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների անձնական օժանդակ տնտեսություններ	100	102	109	114

Ինչպես տեսնում ենք, ընդլայնված վերարտադրություն է տեղի ունենում ոչ միայն հանրային, այլև անձնական օժանդակ տնտեսություններում։ 1955—1972 թթ. մեր հանրապետությունում կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների օժանդակ տնտեսություններում համախառն գյուղատնտեսական արտադրանքը կրկնապատկվել է, իսկ 1960—1972 թթ. աճել է 19,8%-ով, այսինքն՝ ավելի շատ, քան երկրում (14 %)։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճի տեմպերն ըստ տնտեսությունների կարգերի 1960—1972 թթ. այսպիսին են (տոկոսներով՝ 1960 թ. համեմատությամբ)[3]

Տնտեսությունների կարգեր	1960	1963—1964	1965—1966	1967—1968	1969—1970	1971—1972
Բոլոր կարգերի տնտեսություններ	100	91,1	106,1	114,7	124,3	132,4
այդ թվում՝						
Կոլտնտեսություններ, սովխոզներ, պետական այլ տնտեսություններ	100	91,2	109,2	111,6	128,5	138,5
Կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների անձնական օժանդակ տնտեսություններ	100	90,9	99,6	111,9	115,5	119,8

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, օժանդակ տնտեսությունների սահմանափակումները վերացնելուց և արտադրանքի 1960 թ. մակարդակը վերականգնելուց հետո կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների օժանդակ տնտեսություններից ստացած գյուղատնտեսության համախառն արտադրանքն աստիճանաբար աճում է (1965—1966 թ. մինչև 1971—1972 թ. տարեկան միջին աճը կազմել է 3,7%)։ Ուստի անհիմն է այն կարծիքը, թե ընդլայնված վերարտադրությունը հատուկ է միայն սոցիալիստական հանրային գյուղատնտեսական արտադրությանը՝ կոլտնտեսություններին ու սովխոզներին, իսկ անձնական տնտեսություններում տեղի է ունենում սոսկ պարզ վերարտադրություն։ Այսպես, օրինակ, Ա. Գ. Կորյագինը գտնում է, որ «այստեղ (անձնական օժանդակ տնտեսությունում—Հ. Կ.) առավելապես իրականացվում է պարզ վերարտադրություն, թեև, իհարկե, այս կամ այն պատճառների (նախ և առաջ կլիմայական) համաձայն՝ արտադրության ծավալը կարող է մերթ կրճատվել, մերթ մի փոքր աճել»[4]։

---

2 Նույն տեղում, էջ 221։

3 Հաշվարկել ենք Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության նյութերի հիման վրա։

4 А. Г. Корягин, Воспроизводство в социалистическом сельском хозяйстве, М., 1966, стр. 175.

Օժանդակ տնտեսությունը երբեմն դիտվում է որպես կոլտնտեսականների լրացուցիչ զբաղմունք։

Անձնական օժանդակ տնտեսություններից ստացած եկամուտներն օժանդակ է համարում, օրինակ, Մ. Մակեենկոն։ Ըստ որում, 1966 թ. նա դտնում էր, որ օժանդակ տնտեսությամբ զբաղվողների մեծ մասի աշխատանքի վարձատրությունը գտնվում է հասարակայնորեն նորմալ մակարդակի վրա, իսկ օժանդակ տնտեսությունը սոսկ լրացուցիչ եկամտի աղբյուր է։ Նա նաև պնդում էր, թե անձնական օժանդակ տնտեսությունը կոլտնտեսականների համար անհրաժեշտ արդյունքի օբյեկտիվորեն ստեղծված մեծությունից դուրս գտնվող եկամուտների աղբյուր է[5]։ Այսպիսով, ըստ Մ. Մակեենկոյի՝ կոլտնտեսականների մեծ մասի համար աշխատանքային ծախսումները օժանդակ տնտեսության մեջ 1966 թ. եղել են լրացուցիչ, տնտեսագիտական հասկացությամբ ոչ պարտադիր, անհրաժեշտ արդյունքից դուրս եկամուտներ բերող ծախսումներ։ Այս թեզի հետևողական զարգացումը կարող է հանդեցնել այն եզրակացության, թե, իբր, օժանդակ տնտեսությունը կոլտնտեսականների մեծ մասի համար ավելորդություն է։ Նախ, հեղինակը ի՞նչը նկատի ունի, երբ խոսում է օժանդակ տնտեսությամբ զբաղվողների աշխատանքի վարձատրության բավարար մակարդակի կամ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության հասարակայնորեն նորմալ մակարդակի մասին։ Եթե խոսքը կոլտնտեսականների պահանջմունքների լրիվ բավարարման մասին է, ապա միայն հանրային տնտեսության հաշվին կոլտնտեսականների մեծ մասը 1966 թ. դեռ այդպիսի մակարդակի չէր հասել։ Չէ՞ որ հենց այդ ժամանակ սխալ համարվեց կոլտնտեսականների եկամուտների բաշխման կարգը։ Հենց այդ ժամանակ, իրենց աշխատանքի արդյունքներով կոլտնտեսականների շահագրգռվածությունը բարձրացնելու համար սկսեց մտցվել երաշխավորված վարձատրություն։ Մինչ այդ հանրային տնտեսություններից կոլտնտեսականների ստացած եկամուտները մեծ մասամբ նկատելիորեն ետ էին մնում աշխատողների աշխատուժի վերարտադրության և ամբողջ կոլտնտեսային բնակչության վերարտադրության համար հասարակայնորեն անհրաժեշտ մակարդակից։ Հայտնի է, որ այն ժամանակ կոլտնտեսականի աշխատանքի վարձատրությունը դեռ ետ էր մնում սովխոզների բանվորների ու ծառայողների միջին ամսական աշխատավարձից, իսկ վերջինս իր հերթին 25%-ով ցածր էր արդյունաբերական բանվորների ու ծառայողների միջին ամսական աշխատավարձից (1968 թ. այն համապատասխանաբար կազմել է 92,1 և 121,9 ռ.)[6]։

Ըստ կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունների տվյալների՝ 1965—1967 թթ. հանրային տնտեսությունից մեկ աշխատունակ կոլտնտեսականի ստացած միջին-ամսական աշխատավարձը 60 ռուբլուց, այսինքն՝ բանվորների ու ծառայողների չհարկադրվող մինիմումից ցածր է եղել և կազմել է միջին-ցուցակային աշխատող կոլտնտեսականի աշխատավարձի

---

[5] «Вопросы экономики», 1966, № 10, стр. 61.

[6] «Народное хозяйство СССР в 1968 г.», М., 1969, стр. 555. Պետք է նաև հաշվի առնել, որ կոլտնտեսականի միջին տարեկան աշխատավարձը մի փոքր պայմանականորեն է համեմատվում բանվոր-ծառայողների միևնույն ցուցանիշի հետ, քանի որ տարվա ընթացքում աշխատած մարդ-օրերի թվով կոլտնտեսականը խիստ հետ է մնում բանվորից ու ծառայողից, իսկ դա անդրադառնում է աշխատունակ կոլտնտեսականի միջին ամսական վաստակի վրա։

64%-ը։ Այս համեմատությունը բերվում է նրա համար, որովհետև տվյալ դեպքում քննարկվում է ոչ թե աշխատավարձի մակարդակը, այլ հանրային տնտեսությունից աշխատունակ կոլտնտեսականի և կոլտնտեսային ընտանիքի ստացած եկամտի մակարդակը, որը զգալիորեն զիջում է բանվորի և ծառայողի եկամուտների (աշխատավարձի) մակարդակին։

Այն, որ միայն հանրային տնտեսությունից կոլտնտեսականների ստացած եկամուտները չեն ապահովում կոլտնտեսային ընտանիքի մեծ մասի բարեկեցության հասարակայնորեն անհրաժեշտ մակարդակը, անուղղակիորեն վկայում են նաև Մ. Մակեենկոյի տվյալները, որոնց համաձայն հանրային տնտեսությունից ստացած եկամուտները 1966 թ. կազմել են կոլտրնտեսային ընտանիքի ողջ եկամտի մոտ 50, կողմնակի աշխատանքների վարձը՝ 12,5 և օժանդակ տնտեսության գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացած եկամուտները՝ մոտ 28%[7]։ Ըստ որում, այս թվերը պատկերացում են տալիս միայն կոլտնտեսային ընտանիքի դրամական եկամուտների մասին։ Բայց չէ՞ որ օժանդակ տնտեսությունից ստացվող մթերքների հիմնական մասն սպառում է կոլտնտեսականի ընտանիքը։

Հայկական ՍՍՀ-ում հանրային տնտեսություններից ստացած եկամուտը 1965 թ. կազմել է կոլտնտեսականների ամբողջ եկամտի միայն 39,5%-ը, 1970 թ.՝ 42,2%-ը, իսկ մնացածը բաժին է ընկել օժանդակ տնտեսություններից ստացած եկամտին և պետական այլ կազմակերպություններում կատարված աշխատանքի համար ստացած վարձատրությանը[8]։ Այսպիսով, եթե հաշվելու լինենք կոլտնտեսականների դրամական և բնամթերային եկամուտները, ապա կպարզվի, որ Հայկական ՍՍՀ-ում 1970 թ. հանրային տնտեսությունից կոլտնտեսականի ստացածը նրա եկամուտների կեսն էլ չի կազմում։ Հետևաբար, չի կարելի պնդել, որ կոլտնտեսականների ճնշող մեծամասնությունը հանրային տնտեսությունից եկամուտներ է ստացել հասարակայնորեն նորմալ մակարդակով և օժանդակ տնտեսությունից ստացվող եկամուտները սոսկ լրացուցիչ աղբյուր են և ծառայում են պահանջմունքների առավել լրիվ, այսինքն՝ հասարակայնորեն անհրաժեշտ մակարդակի շրջանակներից դուրս պահանջմունքների բավարարմանը։

Տեսական ընդհանուր այն դրույթը, թե օժանդակ տնտեսության արդյունքը լրացուցիչ եկամուտ է, իմաստազրկվում է, երբ այն դիտում ենք որպես որոշակի քանակությամբ բնամթերք։ Իսկապես, գյուղատնտեսական մթերքների արտադրության և սպառման մեջ անհատական օժանդակ տնտեսության մասնակցության վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կարգի տնտեսություններում մի շարք գյուղատնտեսական մթերքների արտադրությունն իր տնտեսական իմաստավորվածությամբ դուրս է գալիս օժանդակ նշանակության շրջանակներից և մեծ տեղ է գրավում ընդլայնված վերարտադրության մեջ։ Այսպես, օրինակ, 1971 թ. անձնական օժանդակ տնտեսություններում արտադրվել է երկրում արտադրված ամբողջ կարտոֆիլի 63, ձվի՝ 60, մսի՝ 35, բանջարեղենի՝ 37, կաթի՝

---

7 «Вопросы экономики». 1966, № 10, էջ 61, 62։

8 Ն. Մ. Մանասերյան, Կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը և հանրային տնտեսության շահութաբերությունը («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1971, № 5, էջ 79)։

35%-ը[9]։ Ընդ որում բնորոշ է, որ չնայած վերոհիշյալ մթերքների ընդհանուր արտադրության մեջ օժանդակ տնտեսությունների տեսակարար կշիռը փոքրացել է, արտադրության ծավալն այդ տնտեսություններում մեծացել է։

Ստորև բերվող աղյուսակում ցույց է տրված, թե 1950—1960 թթ. համեմատությամբ, 1969—1971 թթ. (երեք տարվա միջին ցուցանիշը) գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղված մեկ աշխատողի հաշվով ՍՍՀՄ-ում որքանով է աճել անձնական տնտեսությունների արտադրանքը[10]։

Գյուղատնտեսական մթերքներ	1950	1960	1969—1971	1969—1971 թթ. տոկոսներով՝ 1950թ. և 1960 թ. համեմատությամբ	
				1950	1960
Կարտոֆիլ կգ.	2100	1810	2290	109,0	126,5
Բանջարեղեն կգ.	133	248	285	214,3	114,9
Միս կգ.	107	123	167	156,1	135,7
Կաթ կգ.	862	986	1118	129,7	113,4
Ձու հատ	339	744	814	240,1	109,0

Կարելի է կատարել նաև հետևյալ համեմատությունը. ՍՍՀՄ-ում գյուղատնտեսության մեջ անմիջականորեն զբաղված գյուղական բնակչության տոկոսը (ՍՍՀՄ ողջ բնակչության համեմատությամբ) 1970—1971 թթ. մոտավորապես համընկնում էր օժանդակ տնտեսություններում այնպիսի մթերքների արտադրության տեսակարար կշռի հետ, ինչպիսիք են միսը, կաթը, բանջարեղենը։ Հետևաբար, եթե պայմանականորեն քաղաքային և գյուղական բնակչության համար վերոհիշյալ մթերքների սպառման միատեսակ նորմա ընդունենք, ապա գյուղական բնակչությունն այդ մթերքներով իրեն կարող է ապահովել օժանդակ տնտեսություններից ստացած արտադրանքով[11]։ Ինչ վերաբերում է կարտոֆիլի և ձվի արտադրությանը, ապա օժանդակ տնտեսությունների արտադրանքի մի մասը սպառել է քաղաքային բնակչությունը։ 1971 թ. տվյալներով կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների օժանդակ տնտեսությունները արտադրել են երկրի ամբողջ ապրանքային կարտոֆիլի 39, բանջարեղենի՝ 13, մսի՝ 18, կաթի՝ 5, ձվի՝ 16, բրդի՝ 16%-ը[12]։

Այսպիսով, ակներև է, որ անհատական օժանդակ տնտեսությունները դեռևս ունեն կարևոր նշանակություն։

Սոցիալիստական հասարակարգի զարգացման արդի փուլում, երբ առայժմ լրիվ չեն բավարարվում ժողովրդական տնտեսության ու բնակչության պահանջմունքները բանջարեղենի, պտուղների, մսի, կաթի, ձվի նկատմամբ, կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների օժանդակ տնտեսության

---

[9] „Народное хозяйство СССР 1922—1972". стр. 255.

[10] Հաշվարկել ենք „Народное хозяйство СССР в 1970 г.", М 1971, стр. 278, 280, 281, 404, «Народное хозяйство СССР 1922—1972», стр. 222—224, 283, հրատարակված տվյալների հիման վրա։

[11] Գյուղական ու քաղաքային բնակչության հիշյալ մթերքների սպառման փաստացի նորման նկատելիորեն տարբերվում է։ Քաղաքային բնակչությունը ավելի շատ միս, բանջարեղեն է սպառում, իսկ գյուղի բնակչությունը՝ կարտոֆիլ, ձու։

[12] «Народное хозяйство СССР 1922—1972», стр. 227.

ընդլայնված վերարտադրության օրինաչափությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ օժանդակ տնտեսությունը որոշակի իմաստով սոցիալիստական ձեռնարկությունների բաղկացուցիչ մասն է, քանի որ նրա համար հիմք է ծառայում հողը, որը գյուղատնտեսության մեջ արտադրության հիմնական միջոցն է և հանդիսանում է համաժողովրդական սեփականություն, իսկ կոլտնտեսականների օժանդակ տնտեսություններն առանձնացված են կոլտնտեսություններին ամրացված հողերից։

Կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների անձնական օժանդակ տնտեսություններն օգտվում են կոլտնտեսությունների ու սովխոզների օժանդակությունից։ Այսպես, օրինակ, նրանք օգնություն են ստանում հողի նախնական մեքենայական մշակման գործում, մի շարք այլ գյուղատնտեսական աշխատանքներում և տրանսպորտային փոխադրումներում։ Կոլտնտեսությունների և սովխոզների օգնությամբ օժանդակ տնտեսություններում աշխատանքներ են կատարվում անասունների ցեղայնությունը, գյուղատնտեսական կուլտուրաների տեսակները բարելավելու, տնկանյութ ձեռք բերելու գործում և այլն։ Դրանք նպաստում են օժանդակ տնտեսություններում բերքատվության և անասունների մթերատվության բարձրացմանը, հետևաբար հանգեցնում այդ կարգի տնտեսություններում գյուղատնտեսության արտադրանքի աճին։

Ոռոգման սիստեմի զարգացումը ջրով ապահովում է նաև կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների տնամերձ օժանդակ տնտեսությունները։ Վերջապես, այս տնտեսություններում ևս արտադրության կառուցվածքը կատարելագործվում է, մի կողմից այն պատճառով, որ հանրային տնտեսությունն ու պետական, կոոպերատիվ առևտուրը գյուղի բնակչությանը գնալով ավելի լավ են ապահովում բազմազան մթերքներով, իսկ մյուս կողմից՝ կոլտնտեսականների պահանջմունքները դառնում են ավելի բազմակողմանի, բարձրանում է նրանց ճաշակը, ուստի և վերջիններս սկսում են իրենց օժանդակ տնտեսություններում աճեցնել ավելի արժեքավոր գյուղատնտեսական կուլտուրաներ, հողն օգտագործում են այգեգործության զարգացման համար։ Ինչպես հայտնի է, գյուղատնտեսական արտադրության խելացի կազմակերպումը թույլ է տալիս միևնույն հողատարածությունից շատ ավելի համախառն արտադրանք ստանալ։ Այսպիսով, բավականին հնարավորություններ կան տնամերձ հողամասերի տարածության և անասունների գլխաքանակի նույն մակարդակին մնալու պայմաններում արտադրության ինտենսիվացման, կառուցվածքի բարելավման և կոլտնտեսությունների ու սովխոզների աջակցության շնորհիվ օժանդակ տնտեսություններում արտադրության որոշակի ընդլայնման համար։

Ընդլայնված վերարտադրությունն օրինաչափ է դառնում, եթե նկատվում է օժանդակ տնտեսության որևէ ընդլայնում, օրինակ՝ անասունների գլխաքանակի աճ։ Հենց այդ մասին է խոսվում ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվներում։ Ընդ որում, կոլտնտեսություններին և սովխոզներին խորհուրդ է տրվում գյուղական բնակչությանն անհրաժեշտ օգնություն ցույց տալ անհատական օժանդակ տնտեսությունը վարելու, անասունների ու թռչունների գլխաքանակն ավելացնելու գործում։ Դրան պետք է նպաստի ՍՄԿԿ XXIV համագումարի այն ցուցումը, որ կերի արտադրության աճը կոլտնտեսություններում պետք է լրիվ բավարարի հանրային անասնաբուծության և

անձնական օգտագործման անասունների կերի պահանջը[13]։ Այսպիսով, բացառված չէ կոլտնտեսականների, սովխոզների բանվոր-ծառայողների անձնական օժանդակ տնտեսություններին համախառն արտադրանքի ընդլայնված վերարտադրությունը 9-րդ հնգամյակում։

Երբ գյուղում սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետագա կատարելագործման շնորհիվ կոլտնտեսությունների ու սովխոզների հանրային տնտեսությունը կհասնի գյուղատնտեսական մթերքների արտադրության այնպիսի բարձր մակարդակի, որ գյուղական բնակչության՝ կարևորագույն սընընդամթերքների նկատմամբ ունեցած պահանջմունքները հանրային տընտեսությունները լրիվ կբավարարեն, անձնական օժանդակ տնտեսություններն աստիճանաբար կկորցնեն իրենց անհրաժեշտությունը։ Օժանդակ տընտեսությունը թերևս կմնա որպես տնային տնտեսության տարատեսակ և ոչ մեծ տնամերձ հողամասը կլինի ընտանիքի կենսաթոշակային հասակի անդամների և ղուտ տնային տնտեսության մեջ զբաղված կանանց օգտակար աշխատանքի առարկա։ Իսկ աշխատունակ կոլտնտեսականները, որոնք հանրային աշխատանքից ազատ ժամանակի մեծ մասը այժմ ծախսում են տնամերձ հողամասի մշակման վրա, կօգտագործեն այն հանգստի և հոգեկան պահանջների բավարարման համար։

РОЛЬ ЛИЧНОГО ПОДСОБНОГО ХОЗЯЙСТВА В СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОМ ПРОИЗВОДСТВЕ

О. Х. КАРЧИКЯН

Доктор экономических наук

Резюме

В личном подсобном хозяйстве происходит в небольших размерах расширенное воспроизводство. Определенное развитие производства в этой категории хозяйств обусловлено объективной необходимостью удовлетворения потребностей колхозников в некоторых важных продуктах питания. Изучение роли личного подсобного хозяйства в сельскохозяйственном производстве приводит к выводу о том, что подсобное хозяйство по своему значению выходит за рамки второстепенного источника доходов колхозников.

В сельском хозяйстве необходимый продукт выступает также в форме денежных и материальных доходов колхозников от личного подсобного хозяйства.

---

13 «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿԿ XXIV համագումարի Դիրեկտիվները», Երևան, 1971, էջ 42—43։